է, որ նա ռուսերէն չի հասկանում, ուստի եւ ստորագրել չի կարող:

Միլիցիականը տաքանում է, պոռում, կանչում:

Միջամտում ենք: Աւելի շուտ միջամտում եմ ես: Մարդար աղան վանեցի է, ուստի պարտաւոր չէ ռուսերէն իմանալու: Վերջապէս, օրէնքը կայ եւ հիմնարկութիւնների հայացման սկզբունքը պէտք է ներմուծուի:

— Պէտք է խօսել եւ գրել բանուորա-գիւղացիութեան լեզուն, հասկանո՞ւմ էք, ընկեր միլիցիական:

— Հալա սպասիր...հալա սպասիր...

Ու ընկեր միլիցիականը զայրացած դուրս է նետւում եւ դուռը աղմուկով ծածկում:

Մարդար աղան փիլիսոփայում է: «Ոսկիներս առին, խալիներս կերան, այժմ ալ ամէն օր տուգանք տուգանքի ետեւէն: Ա՛ն ալ ռուսերէն: Աղրար, խիղճ չունին»:

Երեկոյեան, երբ ուշ վերադառնում եմ տուն, Սաթօն յայտարարում է. «Երկու միլիցիականներ եկան, մինչեւ ժամը ինը սպասեցին, նաչալնիկը քեզ պահանջում ա... Ասացին վաղը առաւօտ անպատճառ գնաս»:

— Տես, դրօշակը ետ առնես, հրաշալի կտաւ է, տղոց համար զգեստ կարելի է կարել:

Այդքան էլ անգիտակցութիւն...

Պարզ է, որ այլեւս ինձ հանգիստ չպիտի թողնեն: Միլիցիապետը, առանց վերին հրամանի չպիտի համարձակուէր ինձ դէմ որեւէ քայլ առնել: Պարզ է:

Իսկ այնտեղ, վերեւում, ինձանից ի՞նչ են ուզում:

Անկողնիս մէջ սկսում եմ դէս դէն դառնալ: Քուն չունեմ: Գլխիս մէջ հազար ենթադրութիւններ են անցնում: Ընկել եմ ծուղակի մէջ: Բոլոր դռները փակ են եւ գնալ, փախչելու ոչ մի հնարաւորութիւն կայ:

Ծխում եմ, ծխում եմ...

* * *

Առաւօտեան ներկայանում եմ նաչալնիկին:

— Դուք հակայեղափոխական էք...

— Ձեր խօսքերը լաւ չափեցէք:

— Ինչպէ՞ս...

— Այո՛:

— Դուք ինձ վիրաւորեցի՛ք: Եկել էք այստեղ բարձր ձայնով պոռում էք...պրատակո՛լ...

— Ինչ ուզում էք գրեցէք:

— Երէկ դուք արգիլել էք միլիցիականին տուգանքի գանձումը... հակայեղափոխական ճառ էք ասել եւ այսօր էլ ինձ էք վիրաւորում: Դուք ձերբակալուած էք:

Այդ սրիկան ատրճանակը դրել է սեղանի վրայ, ձախ ձեռքով թուրը բռնել եւ քիչ է մընում վրաս նետուի:

— Դուք ձեր գանգատը գրեցէք ինչ ձեւով որ ուզում էք,— ասում եմ հանգիստ ձայնով,— սակայն, ինձ ձերբակալելու իրաւունք չունէք, որովհետեւ պետական թերթի խմբագրութեան մէջ ինձ սպասում են, յօդուած պիտի գրեմ շատ կարեւոր մի խնդրի մասին եւ նաեւ որովհետեւ Կանադայից բանուորական պատգամաւորներ են եկել եւ ես Հայաստանում միակ մարդն եմ, որ կանադերէն իմանում եմ... Ինձ սպասում են անհամբեր, եթէ չէք հաւատում, թո՛ղ ձեր միլիցիականներից մէկը ինձ հետ գայ...

— Գնացէք, պայմանով որ անմիջապէս յետոյ ներկայանաք գլխաւոր միլիցիապետին:

— Հէնց որ կանադացիներին ճամբայ դրի թէ չէ...

— Էլ ասացի:

Ի՞նչ լաւ հնարեցի այդ կանադերէնի պատմութիւնը:

* * *

Մի ժամ յետոյ:

«Խորհրդային Հայաստան»ի խմբագրատան մէջ, բարեկամ ընկեր կոմիսարը հեռաձայնի առջեւ զայրանում է.

— Սրիկանե՛ր, ո՞վ ձեզ իրաւունք տուեց պետական թերթի աշխատակիցը նեղել...

— ...

— Կարող են եւ զրպարտութիւններ լինել: Ես ձեզ, չուն չան որդիք, ցոյց կը տամ... Հարցը կը դնեմ Ցեկայի առջեւ...սվոլոչի...

Մի ժամ յետոյ, միլիցիականները նորից կանգնած են դրանս առջեւ: Ինձ տանում են միլիցիապետի մօտ:

Հարցաքննում: Դէս դէն:

— Ձեր գործը գնում է Ցեկա:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան